

ԲԱՌԱՔՆՆԱԿԱՆ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՇՈՏ ԱՐՐԱՀԱՄՅԱՆ

ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ

Կառավարական — բառը մեր մատենագրության մեջ վկայված է V դարից, մեր պարական լեզվի մեծագույն շրջանից՝ «խազ, ծաղրանք, այպանք», այլև «ծաղրածու, միմոս, խեղկատակ» իմաստներով: Այն հայոց լեզվի ներկա շրջանի հաճախորդ բառերից է և հանդես է գալիս մի քանի նրբիմաստներով՝ 1. «զվարճություն պատճառող խոսք կամ արարք», 2. «ոչ լուրջ մտքով ասվող խոսք», 3. «ծաղրանք՝ խոսքով կամ վարմունքով», 4. «անկարևոր, աննշան բան» և այլն:

Ստուգաբանված է և ճանաչված որպես հնդեվրոպական ծագում ունեցող բառ: Ծագում է հնի. gad — արմատից: Իբրև ստուգաբանության հիմնավորում նշվում են համեմատելի զուգաբանություններ սանսկրիտից՝ gad, gadati «ասել, խոսել, անվանել, հաշվել», gada, gadā «խոսք, խոսակցություն», gadgada «կիսատ — պուտ խոսել, կակազել» և այլն: Ըստ այդմ՝ պարզական արմատը պիտի լինի gad > կառ-ը: Այստեղ առ-ը հետագա հավելում է, թերևս որպես ածանց, բայց արդեն ձուլվել է արմատին: Սա ճիշտ և ընդունելի ստուգաբանություն է, քանի որ կատարված է ձևաիմաստային համապատասխանությունների հաշվարկման հիմունքով: Սակայն պետք է նկատել, որ համեմատությունները լրացման կարիք ունեն՝ ըստ գոյություն ունեցող տվյալների:

Ակնհայտ է հայերենի այս արմատի աղբյուրակցությունը նաև հնդեվրոպական այլ լեզուների և առաջին հերթին սլավոնականների հետ: Նկատի ունենք ընդհանուր սլավոնական гадать -ը՝ իր բազմաթիվ զուգաբանություններով: Այսպես, հին ռուսերեն гадати «մտածել, ենթադրել», ժամանակակից ռուսերեն гадать 1. «գուշակել, գուշակություն անել», 2. «ենթադրել, ենթադրություններ անել, կուսումներ անել», ուկրաիներեն гадати «մտածել, ենթադրել», բելոռուսերեն гадать «գուշակել, կուսել, գլխի ընկնել, խոսել, մտադրվել», լեհերեն gadać «խոսել, շատախոսել, դատարկաբանել, շաղակրատել», gadika «խոսակցություն, ասացվածք, վեճ», չեխերեն hádati «գուշակել, կուսել, գլխի ընկնել», hadati-se «գծովել, վիճաբանել», hadka «վեճ, խոսքակռիվ», սլովակերեն hádat «խոսել», կաշուբերեն gadac «խոսել» և այլն:

Մասնագետները սլավոնական այս զուգաբանություններին որպես ազգայինց ցույց են տվել և ուրիշ լեզուների բառեր: Մ. Ֆասմերը ճշմարտության մոտ է համարում հետևյալ համեմատությունները՝ հին իսլանդերեն gata «ենթադրություն, կասկածանք, հանելուկ», gata «խոսք, ենթադրություն, հավատ»: Նա հնարավոր է համարում ուրիշների նշած զուգաբանությունները՝ լիտվական godoti «ձգտել, մտածել», godele «մտածել, միտք անել», godyti «հոտառությամբ գտնել, գլխի ընկնել», լատիշերեն gudots «պատիվ», այլև՝ գոթերեն bigitan «հասու լինել, գտնել», նոր բարձր գերմաներեն vergessen «մոռանալ», ալբաներեն genj, gjënj «գտնում եմ», gjëndem «ինձ գտնում են», հունարեն χανδάνω «բռնում եմ, խլում եմ, ճանկ . . . եմ», լատիներեն prehendo «բռնում եմ, հափշտակում եմ», praenda «ավար, ձեռքբերում, հանույթ» և այլն²:

Արմատը ծագած ենք համարում հ.-հ. ghend-, ghed ալթատից՝ բռնել,

1 Տե՛ս Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 1—7, Երևան, 1926—1935, հ. 3, էջ 1025:

2 М. Фасмер, Этимологический словарь русского языка, т. 1, М., 1964, с. 381.

ձեռք բերել, հասկանալ» նշանակությամբ³։ Այստեղ պետք է հիշենք հ. - Կ. հիմք լեզվի *g²ad-* արմատը՝ «ասել, խոսել...» նշանակությամբ (նրա վերականգնումը սանսկրիտի և հայերենի տվյալներով՝ անկասկած է)։ Դժվար չէ նկատել, որ սլավոնական լեզուների զուգաբանությունների մեջ իրեն զգալ է տալիս ասելու, խոսելու, խոսքի, խոսակցության նշանակությունը։ Հետևաբար, ավելի ճիշտ կլիներ դրանց մեջ դիտել հ. - Կ. *g²ad-* «ասել, խոսել, արմատի զարգացումը։ Այդպիսի ստուգաբանության ընդունումով և համապատասխան զուգաբանությունների նշումով մեկ անգամ ևս կընդգծվի հայերենի ազգակցական աղբյուր սլավոնական լեզուների և մյուս կողմից սլավոնական լեզուներինը՝ սանսկրիտի հետ։

Բերան — հայերեն համագործակցական բառերից է բերանը-ը, հայտնի «բերան» և փոխաբերությամբ նաև՝ «անցք, դուռ, բացվածք, սրի՝ դանակի, բերան, սկիզբ, անդամ, հրաման, անձ» իմաստներով։ Վկայված է մեսրոպյան շրջանից և լայն գործածություն ունի այժմ էլ։ Ստուգաբանորեն պարզված է, որ ունի հնդեվրոպական ծագում։ Պարզական արմատն է բեր (—ան —ը ածանց է)։ Ժամանակակից լեզվազգացողությամբ ներկայանում է որպես արմատական բառ։

Ծագում է հ. - Կ. *bher-* «ծակել, ճեղքել» արմատից։ Ուրեմն, ըստ այդմ, բառը նախապես պիտի նշանակեր «կենդանի էակի գլխի համապատասխան մասում եղող ճեղք, անցք, բացվածք»։ Համեմատված և մատնանշված զուգաբանություններն են՝ լիտվերեն *burna* «բերան», հունարեն *φάρυγξ* և լատիներեն *frumen* «բլմայան, կոկորդ», հին իսլանդերեն *borke* «վիզ», բուլղարերեն *birna* «շրթունք»։ Հատկապես «անցք», «ծակ» նախնական նշանակության համար ցույց են տրված հետևյալ զուգաբանությունները՝ իռլանդերեն *bern* (հայց. *beirn* < **berna*) կամ *berna* (հայց. *bernaid* < **bernat*) «ծակ, բացվածք», ալբաներեն *brime* «ծակ», հին իռլանդերեն *bora* «ծակ»⁴։

Հ. - Կ. այս *bher* արմատն ապրել է իմաստային, այլև ձևային ճոխ զարգացում ժառանգ լեզուներում։ Հ. Աճառյանն ի մի է բերել և ցուցադրել նկատված բոլոր զուգաբանությունները բազմաթիվ լեզուներից՝ սանսկրիտից, պարսկերենի տարբեր շրջաններից, քրդերենից, թրակերենից, հունարենից, ալբաներենից, լատիներենից, հին սլավոներենից, ռուսերենից, լիտվերենից, հին բարձր գերմաներենից, նոր բարձր գերմաներենից, անգլերենից, հին իսլանդերենից, իռլանդերենից։ Զուգաբանություններն արտահայտում են կտրելու, ճեղքելու, ծակելու, ծեծելու, հերկելու, ճեղքի, անցքի, հերկի, ակոսի, այլև կտրող, ճեղքող, ծակող առարկաների գաղափարներ⁵։

Հայերենում հիմք լեզվի *bher* — արմատի զարգացումն ընթացել է բերան, բան և բիրն ուղղություններով, որոնցից առաջինի մասին արդեն նշվեց վերը։ Ինչպես ճիշտ նկատում է Հ. Աճառյանը, հայերենի բան — ի նախնական ձևը եղել է *բարն, որը, ժառանգվելով *bher* — ից, հետագայում կորցրել է *ր* — ն։ Մրա հետ եղել է և բիրն — ը, որը գրաբարում արդեն կորցրել էր *հ* — ն և առկա էր բիր ձևով՝ «մահակ, հաստ գավազան» նշանակությամբ։ Նրա իմաստը կապվել է ոչ միայն ծեծելու (հմմտ. բրածեծ), այլև փորելու գաղափարների հետ (հմմտ. բրել, բրիչ և այլն)։ Բիրն — նախնականությունն այսօր երևում է մեր տրոշ բարբառներում պահված բիրն, բիր ձևերում՝ ցցի կամ փորող սրածայր գործիքի նշանակությամբ⁶։

Հ. - Կ. *bhen* — արմատի ժառանգ զուգաբանությունների մեջ ցույց են տրված հին սլավոնական *briti* «մազերը կտրել, սափրել», *brici* «ածելի»։

³ Ստուգաբանության և զուգաբանությունների մասին տե՛ս Վ. Գ. Преображенский, Этимологический словарь русского языка, т. 1, М., 1959, с. 113—114; «Этимологический словарь русского языка», т. 1, ч. 4, М., 1972, с. 6.

⁴ Տե՛ս Հ. Աճառյան, նշվ. աշխ., հ. 1, էջ 1068—1069։

⁵ Նույն տեղում, էջ 913։

⁶ Հմմտ. նույն տեղում, էջ 914։

brja «կուկի», brani «կուի», ռուսերեն броня «ցաքան», броня «զրահ», брять «ածելի», бряться «ածելի»⁷:

Անհրաժեշտ է նկատել, որ հայերենի հետ ծագումնաբանորեն առնչվող սլավոնական վեր հանված ոչ բոլոր փաստերն են ներկայացվել, իսկ մյուս կողմից սլավոնական նյութի ուսումնասիրության մեջ չեն դիտվել հայերենի աղբյուրները:

Ամենից առաջ պետք է լրացուցիչ կերպով նշենք հ.-հ. նույն bher — արմատից ծագած борозда — ն՝ «ակոս» նշանակությամբ, որի ստուգաբանությունը վաղուց հայտնի է համապատասխան գրականությունից: Ազգակցությունն ավելի համոզիչ է ներկայանում «ակոս», «հերկ», «արոր», «հերկի» իմաստային զուգաբանություններով, ինչպես՝ հունարեն ἀρός «արոր, ակոս, հերկ», φάρος «հերկում եմ», այլև φάρος «ճեղքում եմ» և այլն: Ժիշտ է նկատված, որ борозда — ն ածանցավոր բառ է, կազմված է — zd ածանցով (նույն bor- < bhor- < bher — արմատից)⁸: Այն ընդհանուր սլավոնական բառ է: Ընդ նույն սլավոնական լեզվում եղել է бразда, бразна ձևերով: Ժառանգ զուգաբանություններն են՝ ուկրաիներեն боро́за, բելոռուսերեն бара́за, լեհերեն bruzda, brózda, չեխերեն brazda, կաշուքերեն brózda, борзда, պոլաբերեն борзда վերին լուծերեն brozda, ներքին լուծերեն brozda, բուլղարերեն бразда, սերբախորվաթերեն брázда «ակոս և դեմքի կնճիռ», սլովեներեն brázda⁹:

Պարզ է, որ հայերենի բերան, բան («բահ»), բիր («բիր»), բնիր բառերի ստուգաբանության կապակցությամբ ազգակից լեզուների զուգաբանությունների հետ պետք է վերցնել նաև սլավոնական այս փաստերը և, հասկանալի է, սլավոնականների ստուգաբանության դեպքում՝ հայկականները:

Չմոռանանք հիշատակել, որ հ.-հ. bher- արմատի (և նրա bhor-, bor, տարբերակների) հետ, իմաստային ավելի ուժեղ հեռացածությամբ, ծագումնաբանորեն կապված են նաև бор «պուրակ, անտառակ», борш, борода борос «ծխանցք» բառերը¹⁰:

Վալամ — բառը՝ «գրիչ, գրչածայր» այլև «մետաղի սրածայր գործիք՝ փորագրելու կամ քար ճեղքելու համար» իմաստներով տարածված է մեր շատ բարբառներում, այստեղից էլ երբեմն թափանցում է ժողովրդախոսակցական լեզվի մեջ: Միրված է բարբառալեզու գեղարվեստական գրականության մեջ: Զիշենք, օրինակ, Սայաթ — նովայի դասական գործածություններից. «Պատկերքա ղալամով քաշած, թահրտ ունգե ունգ իս անում...»: Առանձին խոսվածքներում հանդիպում է նաև կալամ, կ'ալամ հնչմամբ: Արձանագրված է որպես արաբական փոխառություն¹¹: Կիրառական է նաև պարսկերենում, թուրքերենում և արևելյան այլ լեզուներում, ուր անցել է արաբերենից: Այստեղից բառը հայերենին հավանաբար անցել է թուրքերենի միջնորդությամբ (այդ է ցույց տալիս հնչումը): Որոշ բառերում իբրև կազմության բաղադրիչ պատահում է մեր մի շարք բարբառներում, ինչպես՝ ղալամբաշ «գրչահատ», ղալամբաշ «գրչագործ, փորագրիչ», որոնք արձանագրված են որպես պարսկերենի անցած¹²: Արևմտահայերի մեջ կա Գալեմբաշյան հայտնի ազգանունը, որը գալեմբաշ հասարակ անունից է, իսկ վերջինս էլ գալիս է համապատաս-

⁷ Նույն տեղում, էջ 913: Ը. Աճառյանը միշտ նշում է ստուգաբանության տեղը: Մենք հարկ չենք համարում կրկնել:

⁸ «Этимологический словарь русского языка», т. 1, ч. 2, М., 1965, с. 171.

⁹ Ձուգաբանությունների համար տե՛ս նույն տեղում: Այստեղ նշված են նաև ազգակից ոչ սլավոնական լեզուներից մի շարք զուգաբանություններ (էջ 172):

¹⁰ Հմմտ. А. Г. Преображенский, М. Фасмер, նշվ. աշխ., М. Фасмер, նշվ. աշխ., «Этимологический словарь русского языка», т. 1, ч. 4, համապատասխան բառահոգվածները:

¹¹ Հմմտ. Ս. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, հ. 3, Երևան, 1944, էջ 183:

¹² Նույն տեղում:

խան արհեստից: Այս փաստը հետաքրքրական է նրանով, որ վկայում է դա-
լամ բառի այլաձև հնչման մասին:

Մեղ թվում է, որ արաբերենում galam բառը ծագումով բնիկ չէ: Այն փո-
խառնված է հունարենից: Այստեղ կա γαλαμ բառը, որը բազմիմաստ է: Ար-
ձանագրված են այսպիսի իմաստներ՝ 1. «եղեգն», 2. «եղեգնի ցից», 3. «եղեգ-
նի սրինգ», 4. «կարթ՝ ձողով հանդերձ», 5. «եղեգնի ձող՝ գրելու համար, գրիչ»,
6. «եղեգնի խսիր», 7. «գոխ, ցողուն, ծղոտ», 8. «գիծ, գոլ՝ հյուսվածքի վրա»,
9. «երկարության մի չափ»¹³: Բառի կազմության մեջ -OS—ը գոյականական
ածանց է: Բառը փոխառվել է առանց այդ ածանցի՝ xibay ձևով:

Քաղաքակրթության ընդհանուր պատմությունից հայտնի է, որ մինչև
նոր ժամանակների մետաղե գրիչը գրելու համար տարբեր ժողովուրդներ օգ-
տագործել են զանազան առարկաներ, ինչպես՝ մեր նախնիները՝ ծայրը սրած
ցողուն (հացաբույսերի), որ հին հայերենում կոչվում էր ոճ, ոռեսները՝ ծայրը
սրած փետուր՝ nepo, այդպես էլ գերմանացիները (Feder), ֆրանսիացիները
(plume), անգլիացիները (pen) և այլն: Փաստը ցույց է տալիս, որ հույների կյան-
քում եղեգնը նույնպիսի դեր է կատարել, ուստի և համապատասխան բառը՝
γαλαμ-ը, ժամանակին ձևեր է բերել նաև «գրիչ» իմաստը: Հետաքրքրական
այն է, որ հենց հունարենի մեջ էլ ունեցել է այդ նշանակությունը (հմմտ. վի-
րը նշված 5-րդ իմաստը): Պարզ է, որ արաբերենին պիտի անցած լինի այդ
նույն իմաստով: Իսկ այստեղից էլ ուրիշ լեզուների է անցել այդ իմաստով՝
առանց «եղեգն» իմաստի:

Ջինս—բառը «տոհմ, ազգատոհմ, ցեղ, տեսակ» նշանակությամբ հանդի-
պում է մեր բարբառներում: Արձանագրված է որպես արաբական փոխառու-
թյուն¹⁴: Տեղ-տեղ հանդես է գալիս նաև ջրեն հնչմամբ (օրինակ՝ Սևանի շրջանի
Գեղամավան, Ծաղկունք, Դղմաշեն, Զովաբեր և մյուս գյուղերի խոսվածքներում):
Կարծում ենք, որ արաբերենում jins բառը իր հերթին փոխառություն է, անցել
է լատիներենից (թերևս ժողովրդական լատիներենի միջոցով): Լատիներենն
ունի gens (սեռ. gentis) բառը, կիրառվել է մի շարք իմաստներով՝ 1. «տոհմ,
տոհմային համայնք», 2. «սերունդ, ժառանգ», 3. «ցեղ, ժողովուրդ», 4. «ազ-
գակից ժողովուրդների խումբ», 5. «քաղաքային համայնք», 6. «մարզ», 7. «ար-
տասահման արտասահմանցիներ», 8. «աշխարհ»¹⁵:

«Տոհմ, ցեղ, սերունդ» նշանակությամբ gens-ը, անցնելով արաբերենին,
այստեղ հնչյունական փոփոխություններ է կրել՝ gens-jins: Արաբերենի հա-
մար այսպիսի դիրքում g—j փոփոխությունը սովորական է: Իսկ e—i փոփո-
խությունն էլ չի կարող կասկած հարուցել: Այսպիսի փոփոխություններով է
բառն անցել հայերենի բարբառներին, ինչպես և արևելյան ուրիշ լեզուների
(թուրքերենին, պարսկերենին և այլն):

Կոբ, կոբուն, կուրո — հայերենի որոշ բարբառներում ու խոսվածքներում
(օրինակ՝ Սևանի, Հրազդանի, Կամոյի շրջաններում) կան կոբ և կոբուն բա-
ռերը: Առաջինն ունի «տոհմ», հատկապես «լուցկու տոհմ» իմաստը, փոխա-
բերաբար նշանակում է նաև «դատարկ փշակ», «դատարկ ակնակապիճ» (օ-
րինակ՝ Գեղամավանի խոսվածքում՝ կոբ անիճ «փշացած և դատարկ ակնակա-
պիճով մնացած աչք»): Իսկ կոբուն-ը նշանակում է «տոհմաձև պատյան»:
Ակնհայտ է, որ այս երկրորդ բառն ածանցված է առաջինից՝ —ուն ածանցով:

Կարծում ենք, կոբ-ը փոխառություն է հունարենից: Սա հունարենի xύβος
(kubos) բառից է՝ վերցված առանց գոյականական—OS ածանցի: Հունարենում
այն ունեցել է այսպիսի իմաստներ՝ 1. «խորանարդ, խորանարդաձև մարմին», 2.
«թվի խորանարդ աստիճանը», 3. «խաղի խորանարդաձև ոսկր», 4. «խաղի
ոսկրի նիստ»¹⁶:

¹³ И. Х. Дворецкий, Древнегреческо-русский словарь, т. I, М., 1958, с. 864.

¹⁴ Ս. Մալխասյանց, նշվ. աշխ., հ. 4, Երևան, 1945, էջ 140:

¹⁵ И. Х. Дворецкий, Д. Н. Корольков, Латинско-русский словарь, М., 1949, с. 391—392.

¹⁶ И. Х. Дворецкий, նշվ. աշխ., էջ 992:

Խորանարդաձև մարմին կարող է լինել և արկղը, սենյակը և այլն: Պարզ է, որ բառը հայերենին է փոխանցվել իր առաջին իմաստով:

Թբիլիսիի հայերեն բարբառն ունի կուբո բառը՝ «դադադ» իմաստով: Այն իրեն զգալ է տալիս նաև Հայաստանի հյուսիսային շրջանների խոսվածքներում: Դա փոխառություն է վրացերենից, որտեղ առկա է նույն հնչմամբ (ку-бо) և նույնական «դադադ» իմաստով: Սա էլ իր հերթին փոխառություն է հունարենից: Հունարենի նույն xύβος-ն է՝ հնչական որոշ փոփոխությամբ և նրա հիմնական իմաստից բխող «արկղ» — «դադադ» իմաստային անցումով:

Մեր լեզվում գործածություն ունի նաև կուբ բառը՝ «մետաղե մեծ աման՝ կաթսա, զանազան հեղուկ նյութեր լցնելու և եռացնելու համար» իմաստով, որը նոր ժամանակների փոխառություն է ռուսերենից՝ куб, իսկ սա էլ իր հերթին փոխառություն է նույն հունարենից¹⁷:

Նամուս — բառը սովորական է մեր լեզվի շատ բարբառներում և ժողովրդական խոսակցական տարբերակում: Նշանակում է «պատիվ, արժանապատվություն»: Թափանցել է նաև գեղարվեստական գրականության մեջ: Պերճախոս է Շիրվանշահի «Նամուս»-ը: Բառը այս ձևով հայերենին (ինչպես և պարսկերենին, թուրքերենին և արևելյան այլ լեզուներին) անցել է արաբերենից, որտեղ առկա է հենց namus հնչմամբ և համապատասխան իմաստով: Արաբերենի մեջ, սակայն, ծագումով բնիկ բառ չէ: Այստեղ նա փոխառված է հունարենից, որտեղ կա νόμος (nomos) ձևով և նշանակում է «սովորույթ, օրենք, օրենսդրություն»¹⁸: Հունարեն այս բառը արաբերենում վերիմաստավորվել է, ստացել namus հնչումը և այդպիսով փոխանցվել ուրիշ լեզուների, այդ թվում նաև մեր լեզվին¹⁹:

Ռուսերեն մի քանի փոխառություններ հայերենի բարբառներում

Հայերենի բարբառներում կան ռուսերենից կատարված բավականաչափ փոխառություններ, որոնք հատուկ հետազոտման կարիք ունեն: Այստեղ մենք նկատի ենք ունեցել դրանցից մի քանիսը միայն:

Գալգալուս — լայն տարածում ունի մեր բարբառներում: Նշանակում է «խոշոր հատիկներով, սպիտակ գույնի ցորեն, սպիտակահատ»: Ցորենի այդ տեսակի հասկը քիստեր չի ունենում, պատիճները զուրկ են դրանցից, «մերկ» են: Այս բառը գալիս է ռուսերենի ГОЛЫЙ КОЛОС «մերկ հասկ» կապակցությունից, որի կազմիչ մասերը մեր բարբառներում միացել են մեկ ամբողջության մեջ, ձևափոխվել ու ընդունել են հիշյալ տեսքը: Երբեմն գալգալուս-ը ասվում է նաև այլ առարկաների, օրինակ, գաղարի մասին՝ այս դեպքում արդեն «ընտիր» նշանակությամբ:

Կորմախ — հայտնի օրենք է, որ մեր լեզուն ուրիշ լեզուներից բայերը վերցնում և վերակազմում է իր բայակազմական կանոններով ու այդպես կիրառում²⁰: Հնարավոր չէ բայը փոխ առնել և գործածել առանց այդպիսի միջամտության: Ռուսերենն ունի КОРМЯТЬ «կերակրել» բայը: Փոխառության դեպքում դա դարձվում է հիմք և վերակազմվում է բայական — ել ձևով՝ կորմախել, այսինքն՝ «կերակրել»: Ասվում է անատոնները կերակրելու մասին: Օրի-

¹⁷ Հմմտ. «Словарь иностранных слов», М., 1964, с. 347.

¹⁸ Sб'ս И. X. Дзорецкѣѣ, նշվ. աշխ., հ. 2, Ե., 1958, էջ 1138:

¹⁹ Մենք այսպիսի ստուգաբանությունը մտածել էինք դեռ քառասնական թվականներին, ասպիրանտական ուսումնառության տարիներին, երբ սկսեցինք ուսումնասիրել հին հունարենը: Այս հոդվածը գրելիս, երբ ստուգում էինք նամուս բառի գործածությունը պարսկերենում, պարզվեց, որ Ֆ. Շթալնգասը, իր բառարանի համապատասխան բառահոգովածում մատնացույց անելով պարսկերենի մեջ փոխանցումն արաբերենից, վերջինիս համար փակագծում նշում է հունարեն νόμος-ը (տե՛ս F. Steingass, Persian—English dictionary, London, p. 1380):

²⁰ Հմմտ. Ա. շ. Աբրահամյան, Բայը ժամանակակից հայերենում, գիրք 1, Երևան, 1962, էջ 119—125:

նակ՝ հենց այդպիսի բառ ունի Գեղամավանի խոսվածքը: Հմմտ. «էթանք ձիանքին կորմտենք»՝ զնանք ձիերը կերակրենք:

Յեմ (yem) — գործածական է Գեղամավանի խոսվածքում: Նշանակում է «անասնակեր»։ Հմմտ. «Անասուններին յեմ տալու վախտն ա»՝ անասուններին կեր տալու ժամանակն է: Փոխառված է հարևան գյուղի (Նլենովկա — Սևան) ռուսերեն խոսվածքից՝ есть (едасть) «ուտել» բայի ներկա ժամանակի ձևից՝ ем:

Պարզված է, որ ուրիշ լեզուների բայի դիմավոր ձևերը փոխառվում են ոչ իբրև բայ, այլ որպես սկզբնաձև անկախացած բառ (գոյական)²¹: Այդպես էլ հիշյալ խոսվածքում յեմ-ը գոյական է:

Փեշ, փոդրաթ, փոդրաթչի, փուր — նշված բառերից առաջին երեքը գործածական են մեր բարբառներում և ժողովրդականացական ոճում, իսկ փուր-ը՝ նաև գրական լեզվում: Փեշ-ը ռուսերեն печь (սլավոնական) բառն է, փոդրաթը՝ подрыд-ը (սկապալա), փոդրաթչի-ն՝ подрыдчик-ը (սկապալառու), փուր-ը՝ пуд (սծանրության չափ՝ 16 կգ կշռով):

Ռուսերեն печь-ը բնիկ հնդեվրոպական բառ է, որի հոմանիշ — զուգաբանություններն առկա են սլավոնական մի շարք լեզուներում: Նշվել են նրա երբեմնի գոյությունը նախասլավոններենում և ազգակցությունը հին հնդկերենի, հունարենի ու լատիներենի հետ²²: Հայերենին անցել է ռուսերենից: Подрыд-ն էլ ածանցավոր բառ է՝ կազմված րяд արմատից և под- նախածանցից: Իրանից է կազմվել подрыдчик-ը՝ «չիկվերջածանցով, որը զբաղմունք նշանակող որոշ բառերի ածանցի նմանակությամբ հայերենի բարբառներում դարձել է — չի (ինչպես բոստանչի, փինաչի, փոնչի և այլն):

Пуд-ը ռուսերենի հին բառերից է, եղել է և հին ռուսերենում: Նրա հոմանիշ զուգաբանությունները կան ուկրաիններենում, բելոռուսներենում: Նշվել է նրա կապը սկանդինավյան լեզուների, անգլոսաքսոնականի և սրա միջոցով՝ լատինների հետ²³:

Այս բառերը մենք հիշատակեցինք մեկ այլ նպատակով ևս: Այստեղ նկատելի է, որ ռուսերենի պայթական խուլ և ձայնեղ բաղաձայնների դիմաց հայերենում բառասկզբում և բառավերջում ունենք շնչեղ խուլեր՝ печь-փեշ, подрыд — փոդրաթ, подрыдчик — փոդրաթչի, пуд — փուր: Արդյոք ինչ-որ հընչյունական օրենք է ձևավորվում: Բայց միաժամանակ նշենք, որ ռուսերենից փոխառված ուրիշ բառերում հայերենում պայթականները մնում են նույն որակով, ինչպես՝ борщ — բուշ (բայց ոչ փորշ), копейка — կոպեկ (բայց ոչ քոպեք):

21 Հմմտ. Նույն տեղում, էջ 121:

22 Տե՛ս, օրինակ, М. Фасмер, *Ист. языкозн.*, т. 3, М., 1971, էջ 256—257:

23 Տե՛ս Նույն տեղում, էջ 401: